



## ԲԱՐՁՐԱԳՈՒՅՆ ԴԱՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՀ

Հ Ր Ա Մ Ա Ն № 22-Ա

### ՊԱՇՏՈՆԻՑ ԱԶԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Ա. Ասլանյանի դիմումը և համաձայն «Դատական դեպարտամենտում ծառայության մասին» օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասի, «Քաղաքացիական ծառայության մասին» օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի, 5-րդ մասի և ՀՀ աշխատանքային օրենսգրքի 130-րդ հոդվածի՝

1. Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի աշխատակազմի ղեկավար Արմեն Ասլանյանին 2021 թվականի մայիսի 24-ից ազատել զբաղեցրած պաշտոնից:

2. Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի աշխատակազմի ղեկավարի պարտականությունների կատարումը վերապահել նույն դատարանի աշխատակազմի ղեկավարի տեղակալի պարտականությունները ժամանակավորապես կատարող Կարեն Համբարձումյանին՝ մինչև թափուր պաշտոնի օրենքով սահմանված կարգով համալրումը:

ԲԱՐՁՐԱԳՈՒՅՆ ԴԱՏԱԿԱՆ  
ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՀԻ  
ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ

2021թ. մայիսի 21  
ք. Երևան

Գ. ԶԱԽԱԳԻՐՅԱՆ